

գիտնալ, թէ ի՛նչ պէտք է մշակուիլ Վանայ մէջ եւ ի՛նչ պէտք չէ մշակուիլ Կարնոյ մէջ. այսպէս իմացի՛ր ամեն ճիւղերուն համար:

Եթէ ոչ ո՛րքալի՝ գոնէ ծիծաղելի է տեսնել, որ ազգի մէջ գիտութիւն եւ արհեստ գիտցող քանի մարդ որ կայ՝ ամենն ալ դուրս ձգուած են այս Ծաղկաքաղէն, որու խմբագրապետն է մի բանաստեղծ: Բայց յուսալի է, որ պ. Թէրզեան ուշադրութեան կ'առնէ մեր անկեղծ դիտողութիւններն եւ ամեն ջանք ի գործ կը դնէ իւր յաջորդ *Ծաղկաքաղները* մանիշակագոյն ապակիներով ծածկուած սենեակի մը մէջ խմբագրել տալու, որպէս զի քիչ ժամանակի մէջ աճին եւ պտղատու լինին Հայաստանի մէջ:

**

16 Յունիս

Երէկ ըսած էի.

«Աշխարհիս վրայ ժամանակն է որ կ'ընէ ամեն բան»:

Այսօր կ'ըսեմ.

«Աշխարհիս վրայ մեր ազգ. Վարչութիւնն է որ բան մը չըներ»:

Դաստիարակութեան խնդիրն, սնդուկի խնդիրը, վանօրէից խնդիրը, ամենը հոն է՝ ուր որ էր քսան տարի առաջ եւ ուր պիտի լինի քսան տարի ետքը:

Ժամանակաւ երբ իմաստասէր մը Դիոգինէսի հետ վիճաբանութիւն կ'ընէր համոզելու համար շնականը, թէ շարժում չկայ՝ կարասաբնական քայլել սկսաւ եւ իւր ընդդիմաբանին ըսաւ.

«Քու փաստերդ կը հերքեմ»:

Եթէ Անտիսթենէսի անառակագոյն աշակերտին պէս ընդդիմախօս մ'ունենայի՝ ազգային Վարչութիւնը կը նետէի նորա առջեւ եւ կ'ըսէի.

«Քու փաստերդ ալ ես կը հերքեմ»:

**

Դեսպանախորհուրդն իւր որոշումն տուաւ Յունաստանի խնդրոյն մասին:

Ոչ միայն որոշում տուաւ, այլ Եանիան ալ տուաւ Յունաստանի:

Հիմա Յունաստանի կը մնայ առնել Եանիան որ իրեն տրուած է: